ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Վ Ա Յ Ո Ց Ձ Ո Ր Ի
Մ Ա Ր Զ Պ Ե Տ

ք. Եղեգնաձոր, Շահումյան 5 **Հեռ. (374010) 287401, (3740281) 2 25 22**

_____,, ,,_____,, 2019թ N _____ **Ֆաքս (374010) 28 18 32**

Առողջապահության քաղաքականության և
նորարարության կենտրոն ՀԿ
Ծրագրերի ղեկավար
Լիլիթ Գևորգյանին

Հարգելի տիկին Գևորգյան

Ձեզ ենք ներկայացնում Վայոց ձորի մարզի բժշկական կազմակերպություններում գործող ուղեգրող հանձնաժողովների վերաբերյալ տեղեկատվությունը.

- ՈՒղեգրող հանձնաժողովների 2018 թվականի կազմը հաստատվել է ՀՀ Վայոց ձորի մարզպետի 2018 թվականի մարտի 16-ի թիվ 21 որոշմամբ: Ապա 2019 թվականին Եղեգնաձորի ԲԿ-ի և Ջերմուկի ԱԿ-ի հանձնաժողովների կազմում տեղի են ունեցել փոփոխություններ՝ Վայոց ձորի մարզպետի համապատասխանաբար 08.02.2019 թվականի թիվ 04 և 25.03.2019 թվականի թիվ 11 որոշումների համաձայն:

2018 թվականին Եղեգնաձորի ԲԿ ՓԲԸ-ի ուղեգրող հանձնաժողովին դիմել է 39 քաղաքացի անվճար և արտոնյալ պայմաններով հիվանդանոցային և առողջարանային բուժում ստանալու նպատակով: Բավարարվել է 29 դիմում, մերժվել է 10-ը՝ առողջարանային բուժման համար ներկայացված դիմումներ(առողջարանային բուժման ուղեգրերը 2018 թվականի մայիս ամսից կասեցվել են):

Վայքի ԲՄ ՓԲԸ-ի ուղեգրող հանձնաժողովին 2018 թվականի ընթացքում դիմել է 7 քաղաքացի պետության կողմից երաշխավորված անվճար հիվանդանոցային ու արտահիվանդանոցային բժշկական օգնություն ստանալու խնդրանքով: Բոլոր դիմումները բավարարվել են:

2018 թվականին Ջերմուկի ԱԿ-ի ՈՒՀ-ին դիմել են 2 քաղաքացի, 2-ի դիմումն էլ բավարարվել են:

Կից ֆայլով ներկայացնում ենք ՀՀ առողջապահության նախարարի 21.02.2018 թվականի թիվ 457-Ա հրամանը, ուղեգրող հանձնաժողովների կազմերի վերաբերյալ մարզպետի որոշումները, 2018 թվականի նիստերի արձանագրությունները:

Invalid signature

X

ՌԱԶՄԻԿ ՏՈՆՈՅԱՆ

Հարգանքով՝ Signed by: TONOYAN RAZMIK 3908810688 **Տ.ՍԱՐԳՍՅԱՆ**

Կատարող՝ առողջապահության և սոցիալական
ապահովության վարչություն Լ.Կարապետյան
Հեռ. /0281/2 43 03